

որ զոգի կրէր եւ զսէր Լեւոնի, քաջալերեալ զնոսա եւ խմբեալ՝ իղիպան վայրի՝ առ փոքու կամրջան, յարձակեցաւ պուղեաց ցրուեաց զբանակ հակառակացն, եւ կալեալ զյուլվս՝ ինոցանէ՝ պատուէր ետ կողոպտել՝ ի զինէ եւ՝ իզգեստու, բայց մի՝ սպանանել. եւ ինքն իւրայովքն զհետ պնդեցաւ փախստէիցն պարոնայց, որք աճապարեալ անկան՝ ի Տարսոն, փակեցին զղրունսն, եւ սկսան իպարսպացն նետաձիգ լինել՝ իզունդն կոստանդեան: Յայսմ ամենայնի խորհրդակից եւ գործակից էր Պայլին՝ կաթողիկոսն Յովհաննէս: Ընդերկարէր եւ դժուարանայր արդեօք պաշարումն եւ առումն քաղաքին Տարսոնի, եթէ չէր Վասիլ ուրումն բանատու եղեալ Գունդստապլին, յորմէ առեալ տուրս զոր խնդրեաց՝ եբաց՝ իզիշերի զղրունս քաղաքին. ինէրքս խուժեցին զօրք Կոստանդնի. եւ որպէս գերելոցն՝ իկոուին՝ եւ զբնակչացն յաւարի առին զինչս, խնայելով՝ ի կեանս նոցա: Բայց Վահրամ եւ Ռուբէն հանդերձ այլովք իշխանօքն ելին ամրացան «՝ իկլայն, որ էր գեղեցիկ եւ անըմբոնելի ամրութեամբ», ըստ պատմչին: Առ որ հարկ եղեւ դարձեալ երկայնմտութիւն եւ խորագիտութիւն Պայլին. զի մի առ մի քակեաց զմիաբանեալսն եւ ձգեաց արտաքս, եւ եղ յարգելան բանտի, մինչեւ տիրացաւ բերդին. ապա զոմանս արձակեաց, զայլս առաւել մեղապարտս՝ արդարապէս պատուհասեաց, ընդ որս սպանաւ եւ Վահրամ իբրեւ ապստամբ, եւ ոմանք՝ իբանդին մեռան: Այսպէս եղեւ եւ տարաբաղդ երիտասարդին Ռուբինի, որ մինչդեռ երկոցուն իշխանութեանց մեծաց թեկն ածէր, տուայտեալ՝ խառապանս զնդանին՝ յամենայնէ զրկեցաւ, եւ յարեւէն իսկ (1222), այնքան պայծառ ծագելոյ երբեմն՝ լուսով Լեւոնի, եւ պայծառագոյն եւս փայլել յուսացուցանելով, կարճ կենօք (հազիւ քսանեւհինգամեայ), ընդ երկար տատանեալ յերկակի նժարս բաղդի, եւ ծաղկապէս խամբեալ ամենայն գեղով հասակին եւ ոսկեթել վարսիւքն²³⁶: Բայց որպէս բազում անգամ՝ իկեանսն՝ նոյն եւ՝ ի մահուն՝ կարեկցութեան գտաւ արժանի. իտղայութենէ անտի իւրոյ թղթովք Լեւոնի եւ ապա իւրովքն եւ այլոց՝ ծանօթ գովով՝ իբազում դէպս յատենի Քահանայապետին Հռովմայ, պատուէր առաքեցաւ աստի առ լիկաթն (Պեղագիոս) յԱսորիս, խնամ տանել կնոջ նորին եւ որդեկացն. որք երկու դստերք միայն յիշին. մին (Եշիվա) վաղամեռիկ լեալ, միւսն՝

²³⁶ Տարեգիր Ս. Երկրին նշանակել յամին 1221 զըմբոնումն Ռուբինի, եւ յետոյ զմահն. «Le Bail d'Ermenie prist Ruppin

à Torso, et le mist en prison, dont il mouru